ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«08» 12 2016թ.
ԶԳ/5710 ՀՊ - 798

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Հ/Կ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր՝ 29.11.2016թ. 316-ի 4 գրության կապակցությամբ տեղեկացնում ենք.

ՀՀ պաշտպանության նախարարությունում հարցումներին պատասխանելու գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 15.10.2015թ. թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված դրույթներով և ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով: Ստացվող հարցումները, համապատասխան գրանցամատյաններում մուտքագրվելուց հետո, ուղարկվում են հարցմանն առնչվող ոլորտի համար պատասխանատու ստորաբաժանումներ՝ հարցումների պատասխանների նախագծերը կազմելու համար: Հարցումների պատասխանները հասցեատերերին ուղարկվում են ՀՀ ՊՆ աշխատակազմի միջոցով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՊՆ պաշտոնական կայքէջում՝ «Գրադարան» բաժնում, առկա է «Տեղեկատվություն ստանալու կարգը և եղանակները» ենթաբաժինը, որը հասանելի է http://www.mil.am/hy/68/291 հղումով: Ենթաբաժնում առկա է նաև տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձևը:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ Մ. Աղեկյան, հեռ.՝ 010 294638

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12